ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԵՐԶՆԿԱՅԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Երզնկա համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Նոր Երզնկա

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 ՄԱՅԻՍԻ 2017թվականի N 38

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 48-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի պահանջներով՝ *որոշում եմ.*

1.Նոր Երզնկա համայնքի 2-րդ փողոցի 12 տան բնակիչ՝ հանգուցյալ Աղանուր Մարտիրոսյանի ընտանիքին տրամադրել ֆինանսական օգնություն 30000 (երեսուն հազար) դրամ:
2. Հանձնարարել գլխավոր մասնագետ Հ. Նազարյանին բյուջեի համապատասխան հոդվածից կատարել վճարում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱԼԻՆԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

20__ թ. _____ __
գ.Նոր Երզնկա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԵՐԶՆԿԱՅԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Երզնկա համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Նոր Երզնկա

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 ՄԱՅԻՍԻ 2017թվականի N 39

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 19-Ի N35 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի պահանջները՝ *որոշում եմ.*

1. Համայնքի ղեկավարի 2017 թվականի ապրիլի 19-ի <<Շինարարության թույլտվության մասին>> թիվ 35 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.
1) որոշման նախաբանում <<37-րդ հոդվածի 1-ին մասի 4.1-րդ կետի>> բառերի փոխարեն լրացնել <<42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի>> բառերը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱԼԻՆԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

20 __ թ. _____
գ.Նոր Երզնկա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԵՐԶՆԿԱՅԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Երզնկա համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Նոր Երզնկա

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 ՄԱՅԻՍԻ 2017թվականի N 40

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 16-Ի N9 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի պահանջներով՝ *որոշում եմ.*

Համայնքի ղեկավարի 2017 թվականի հունվարի 16-ի <<Ինքնակամ կառուցված բնակարանի օրինականացման մասին>> թիվ 9 որոշումը շարադրել նոր խմբագրությամբ.

1. Կատարված ուսումնասիրությունից պարզվել է, որ Զավեն Լուսյա, Փառանձեմ և Արթուր Թադևոսյանները սեփականության իրավունքով իրենց պատկանող Նոր Երզնկա համայնքի 2-րդ փողոց թիվ 31 հասցեում 1980 թվականին իրականացրել են շինարարական աշխատանքներ և ինքնակամ կառուցել են 40,26 քմ. բնակարան:
   Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N912-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ բաժնի 32-րդ մասի ա) կետի և 25-րդ մասի ա) կետի պահանջներով և հաշվի առնելով այն հանգամանքը, որ Զավեն, Լուսյա, Փառանձեմ և Արթուր Թադևոսյաններին սեփականության իրավունքով պատկանող Նոր Երզնկա համայնքի 2-րդ փողոցի թիվ 31 հասցեի 40,26 քմ. բնակարանը կառուցվել է 1980 թվականին, ինքնակամ կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, շինությունները կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

2. Զավեն, Լուսյա, Փառանձեմ և Արթուր Թադևոսյաններին սեփականության իրավունքով պատկանող Նոր Երզնկա համայնքի 2-րդ փողոց թիվ 31 հասցեում ինքնակամ կառուցված 40,26 քմ բնակարանը համարել օրինական:
   1) Սույն որոշման օրվանից 60-օրյա ժամկետում Նոր Երզնկա համայնքի բյուջե պետք է վճարեն Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N912-Ն որոշմամբ հաշվարկված 25364 (քսանհինգ հազար երեք հարյուր վաթսունչորս) ՀՀ դրամ օրինականացման վճար (բնակարան 40,26 x 3000 x 0,21 = 25364 ՀՀ դրամ):
   2) բազմաբնակարանի ինքնակամ կառույցները համարել օրինական:

3) Իրենց միջոցների հաշվին պետք է վճարեն կառույցի իրավունքի պետական գրանցման հետ կապված վճարներն ու տուրքերը:

3. Սահմանել, որ սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում օրինականացման համար սահմանված վճարը չվճարելու դեպքում նշված ինքնակամ կառույցը ենթակա չէ պետական գրանցման, իսկ որոշումը համարվում է ուժը կորցրած:

4. Բնակարանի տակ գտնվող հողամասը հանդիսանում է ամբողջ շենքի բնակիչների ընդհանուր բաժնային սեփականությունը:

5. Որոշման կատարման հսկողությունը դնել աշխատակազմի գլխավոր մասնագետ Լևոն Խուրշուդյանի վրա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱԼԻՆԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

20 __ թ. _____ _____

գ.Նոր Երզնկա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԵՐԶՆԿԱՅԻ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Երզնկա համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Նոր Երզնկա

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 ՄԱՅԻՍԻ 2017թվականի N 41

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 10-Ի N37 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի պահանջներով՝ *որոշում եմ.*

1. Համայնքի ղեկավարի 2017 թվականի մայիսի 10-ի <<Հողամասը անհատույց տրամադրելու մասին>> թիվ 37 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.
1) Որոշման բովանդակության մեջ <<Անժելա Բոյաջյանին>> բառերից հետո ավելացնել <<Դերենիկ, Մանյակ, Սուրեն և Հայկ Պետրոսյաններ>> բառակապակցությունը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱԼԻՆԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

20 __ թ. _____
գ.Նոր Երզնկա